



Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:

giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում

Գյուղատնտեսական նշանակության հողերի նպատակային օգտագործման վերականգնման ու հողատեսքերի արդյունավետ կառավարման ուղղությամբ

Նախաբան

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսական հողատեսքերի 57,3%-ը կազմում են արոտավայրերը և խոտհարքները, որոնք տնտեսական, հատկապես անասնապահության ոլորտի, զարգացման համար նշանակալի ռեսուրս են հանդիսանում: Տնտեսական նշանակությունից զատ արոտավայրերն ունեն նաև բնապահպանական, էկոլոգիական և կենսաբազմազանության պահպանության կարևոր նշանակություն:

Համաձայն «Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման արդյունավետության բարձրացման հայեցակարգի և միջոցառումների ծրագիր հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման՝ կառավարությունը նպատակ ունի կրճատել չօգտագործվող վարելահողերի տարածքը: ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը նպատակ ունի նվազեցնի այդ թիվը, հասցնելով 25%-ի, մինչև 2030 թվականը:

Գյուղատնտեսական կոոպերատիվների զարգացումը կառավարության ռազմավարական խնդիրներից մեկն է. պետության կողմից որդեգրած և իրականացվող ներկայիս քաղաքականությունը լիարժեք արտացոլում է այդ փաստը: Կոոպերատիվները հնարավորություն են ստեղծում գյուղատնտեսական հողաբաժինների կտրտվածության և փոքրության, սահմանափակ ռեսուրսների և համարժեք ենթակառուցվածքների անբավարարության, որակյալ ագրոներդրանքի, ագրոնոմիական մասնագիտացված ծառայությունների հասանելիության պակասի, գյուղացիական տնտեսությունների արտադրական, մատակարարման, իրացման և այլ խնդիրների հետ կապված հարցերի արդյունավետ լուծման համար:

Վերը թվարկված առաջնահերթությունները հաշվի առնելով Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) պատվիրակմամբ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) ԷԿՈՍերվ բնապահպանական ծրագրի աջակցությամբ՝ ՇԵՆ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվել է «Անասնակերի արտադրություն և արոտների բարելավում՝ որպես ՔՈՎԻԴ-19 հետևանքների մեղման միջոցառում» ծրագիրը: Ծրագրի շրջանակներում ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի և Լոռու մարզերում իրականացվել են տասնամյակներ շարունակ չմշակվող վարելահողերի և դեգրադացված արոտավայրերի նորարարական մեթոդներով բարելավման փորձնական գործողություններ:





Գերմանական
համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by:
giz Deutsche Gesellschaft
für Internationale
Zusammenarbeit (GIZ) GmbH

Միջոցառման նպատակն է եղել՝ գործընկեր նախարարություններին ներկայացնել գյուղատնտեսական հողատեսքերի մշակության և արդյունավետության բարձրացման, փորձով ապացուցված, արդյունավետ մեթոդները, որոնք ավելացնելով կերարտադրության ծավալները նվազեցնում են ճնշումը բնական կերհանդակների վրա:

Խնդիրը

ՀՀ ամբողջ տարածքում արոտավայրերի և վարելահողերի ոչ նպատակային ու անխնա շահագործման արդյունքում առաջանում են մի շարք խնդիրներ որոնք ուղղակի և անուղղակի ազդում են տվյալ հողատեսքերի արտադրողականության վրա: Հողային ռեսուրսների ոչ արդյունավետ շահագործումն էլ իր հերթին ուղղակի ազդում է հողօգտագործողի կենսամակարդակի վրա: Վարելահողերի ու արոտավայրերի սխալ, ոչ նպատակային շահագործումը կամ առհասարակ լքված լինելը պայմանավորված են ոչ միայն անվերահսկելի անթրոպոգեն ազդեցությամբ, այլ նաև մի շարք այլ գործոններով՝ սոցիալական, գիտելիքների, տեխնոլոգիաների, ռեսուրսների պակասով: Դժվար հաղթահարելի, կամ ֆերմերի համար անհաղթահարելի խնդիրների պատճառով, բոլոր մարզերում առկա են սեփականաշնորհված վարելահողերի և համայնքային ու պետական սեփականության արոտավայրերի ոչ նպատակային շահագործման փաստեր:

Մասնագետների պնդմամբ ՀՀ արոտավայրերի առնվազն 80%-ը գտնվում են դեգրադացման տարբեր աստիճաններում, իսկ 20%-ը ենթակա է արմատական բարելավման:

Համաձայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության տվյալների վարելահողերի առնվազն 45%-ը չեն օգտագործվում նպատակային նշանակությամբ:

Խնդիրը ավելի սրվել է 2020-2022թթ ժամանակահատվածում՝ կապված ՀՀ տարածք հարևան հանրապետության ներխուժման հետևանքով Գեղարքունիքի, Վայոց ձորի, Մյունիքի ոչ միայն հեռագնա, այլ անգամ համայնքամերձ արոտավայրերի անվտանգ արածեցման ռիսկերի հետ: Այս պայմաններում առկա արոտավայրերի բարելավումը և արդյունավետ կառավարումը՝ զուգակցված դաշտային կերարտադրության զարգացման հետ, հանդիսանում են հրատապ և անհապաղ լուծումներ անասնապահության ոլորտի համար:

Առաջարկվող լուծումը

Առաջարկվում է ներդնել հողատեսքերի բարելավման գործողությունների այնպիսի գործիքակազմ, որը նվազագույն ծախսերով կապահովի առավելագույն արդյունք: Առաջավոր փորձի և առկա ռեսուրսների արդյունավետ համադրություն, որի շնորհիվ փոքր ֆերմերային տնտեսությունները կկարողանան ինքնուրույն վերականգնել և բարելավել սեփականաշնորհված կամ վարձակալված հողատարածքները: Առաջարկվող գործողությունները կապահովեն նաև համայնքում գործող «Արոտօգտագործողների կոոպերատիվների», համայնքային ռեսուրսի կարողությունների բարելավում և առաջարկվող ծառայությունների նոր որակ: Առաջարկվող





գործառույթները հնարավոր է կրկնօրինակել ՀՀ բոլոր մարզերում, հատկապես այնտեղ, որտեղ կան քիչ թե շատ կայացած կոոպերատիվներ:

Վարելահողերի օգտագործումը դաշտային կերարտադրության նպատակով կարող է ունենալ հետևյալ դրական ազդեցությունները.

- Վարելահողերի նպատակային նշանակության վերականգնում,
- Դեգրադացիայի կանխում,
- Պարենային անվտանգություն,
- Արոտավայրերի վրա ճնշման նվազեցում,
- Հավելյալ եկամուտների ապահովում՝ առնվազն 3-4 տարիների ընթացքում,
- Բնապահպանական առումով՝ ածխածնի կլանման ավազանների ավելացում,
- Կորնզանի, առվույտի մշակմամբ հողի բերրիության և արդյունավետության բարձրացում,
- Կլիմայի հարմարվողականության ավելացում՝ հատկապես չորային և երաշտային տարիների համար:

Առաջարկություններ

Վարելահողերի մշակությունը դաշտային կերարտադրության նպատակով հնարավորություն է ստեղծում արոտավայրերի վրա ճնշման նվազեցման համար՝ բացառելով հատկապես վաղ զարնանային և ուշ աշնանային արածեցումները: Լրացուցիչ կերի բազայի ստեղծման միջոցով հնարավոր է այդ գործողությունը ապահովել ՏԻՄ-երի կողմից հստակ արոտային ժամանակահատվածի սահմանման և վերահսկման պարագայում:

Արոտավայրերի և վարելահողերի բարելավման, նպատակային նշանակության վերականգնման համար առաջարկվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1. Մշակել և ընդունել այնպիսի բարեփոխման ծրագիր, որը հնարավորություն կտա ՀՀ բոլոր մարզերի ՏԻՄ-ի միջոցով ներդնել «Խոշորացված համայնքների արոտավայրերի բարելավման տարեկան ծրագիր»:
 - Յուրաքանչյուր խոշորացված համայնք իր հնգամյա ծրագրի մեջ ներառի արոտավայրերի նվազագույնը 20 հա/տարեկան արոտավայրի բարելավում՝ յուրաքանչյուր բնակավայրի/գյուղի համար: Վերահսկողություն սահմանել և ծախսերի փոխհատուցում իրականացնել հետվճարային սկզբունքով միայն երրորդ տարվա մոնիտորինգից հետո:
 - Անհրաժեշտություն կա խոշորացված համայնքի արոտների և կերարտադրության տարածքների քարտեզագրական նյութերի և դրանց ամենամյա թարմացման:





2. ՀՀ այլ մարզերում և շահառու մարզերում ներդնել փորձարկված և առաջարկվող տեխնոլոգիայի ամբողջական մոդելը, կամ մոդելի առանձին միջոցառումները:
 - Հացահատիկի ցանքերի ծախսերի մասնակի փոխհատուցման աջակցության ծրագրում ներառել նաև բարձրարժեք կերային մշակաբույսերի (բազմամյա բակլազգիներ, կերի ճակնդեղ, սիլոսի եգիպտացորեն, ռապս) ցանքերի սուբսիդավորման բաղադրիչ:
 - Սուբսիդավորել բացառապես կոմպլեքս/համակցված պարարտանյութերի (NPK) ներկրումը և օրգանական պարարտանյութերի կիրառումը, դրանով անուղղակի ուղղորդելով ֆերմերային տնտեսություններին հրաժարվել միայն ազոտական պարարտանյութերի կիրառությունից: Կոմպլեքս պարարտանյութերի կիրառությունը կնպաստի մասնավոր տնտեսությունների կողմից սեփականաշնորհված հողային ռեսուրսի որակի բարելավմանը:
 - Խթանել արտարմատային պարարտացման մշակույթի ներդրմանը՝ արտավայրերի, խոտհարքերի բարելավման ու կերային մշակաբույսերի ցանքերում: Պարարտացման այս մեթոդը ավելի արդյունավետ է բույսերի վեգետատիվ արագ աճ ապահովելու տեսանկյունից, ինչպես նաև քիչ վնասակար է շրջակա միջավայրի՝ հողային ռեսուրսի, գրունտային ջրերի աղտոտման տեսանկյունից:
 - Ֆերմերներին իրազեկել ծաղկման խթանիչների (բուսական ծագման) նպատակային նշանակության ու կիրառության վերաբերյալ՝ խոտհարքերի, վարելահողերի ու բաց դաշտի պայմաններում կիրառելու համար: Այս միջոցների կիրառությունը հնարավորություն է տալիս բարձրացնել ծաղկման ու փոշոտման տոկոսը, նպաստել որակյալ սերմի հասունացմանը: Առաջարկվում է ներդնել արտավայրերի ու խոտհարքերի բարելավման համակարգում որպես գործիքակազմ:
 - Ժամանակակից գյուղատնտեսական տեխնիկայի ու սարքավորումների ձեռքբերման աջակցություն ֆերմերային տնտեսություններին և իրազեկում նոր տեխնիկաների վերաբերյալ՝ հողաֆրեզներ, խոտաղացներ, սրսկիչներ, քարհավաքի տեխնիկա:
3. Սուբսիդավորել տեղական արժեքավոր կերային մշակաբույսերի սերմարտադրությունը: Գիտահետազոտական կենտրոնների ու կոոպերատիվների համագործակցություն՝ համատեղ աշխատանքային մոդելի տեսքով՝ միավորելով գիտական ներուժը, կոոպերատիվի հողային, տեխնիկական ու սարքավորումների ներուժը:
4. Բարձրացնել պետական աջակցությամբ ներկրվող կերային մշակաբույսերի սերմերի համար սահմանված չափորոշիչների նվազագույնը շեմը: Սուբսիդավորել միայն բարձր ծլունակությամբ, մաքրասորտ և հավաստագրված սերմերի ներկրումը:





5. Վարելահողերի նպատակային նշանակության վերականգնման համար աջակցել կոռպորատիվների կողմից քարհավաքի ծառայության մատուցման գործառնությունների զարգացմանը՝ սուբսիդավորել մինչև 3 հա վարելահող ունեցող տնտեսությունների 1 հա քարհավաքի ծախսի մի մասը: Այս գործառնությունը կարող է նաև իրականացվել խոշորացված համայնքի կողմից քարքարոտ, տեխնիկայի համար հասանելի արոտավայրերի պարագայում՝ պետական սուբսիդավորման հնարավորության դեպքում:
6. Ֆերմերներին իրազեկել առաջարկվող նորարարական գործառնությունների վերաբերյալ, ապահովել մասնագիտական խորհրդատվություն:
7. Արոտավայրերի խնդրի հրատապությունից ելնելով առաջիկա երկու տարիների ընթացքում սուբսիդավորել հեռագնա արոտավայրերի ճանապարհների բարեկարգման փաթեթ՝ Սյունիքի, Գեղարքունիքի, Տավուշի ու Վայոց ձորի համար: Համագործակցել ՏԿԵՆ-ի հետ, որպեսզի սուբվենցիոն ծրագրերում ավելի մեծ ծավալի ներառվեն:

Առաջարկվող միջոցառումների ներդրման շնորհիվ հնարավոր է բարձրացնել վարելահողերի և արոտավայրերի արտադրողականությունը, ապահովել հավելյալ եկամուտ: Առաջարկվող բարելավման մոդելները ապահովում է նախկինում ընդունված ավանդական բարելավման մոդելի համեմատ դրամական միջոցների խնայողություն:

Սույն քաղաքականության համառոտագիրը մշակվել է Գերմանիայի Դաշնային Հանրապետության տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության (BMZ) պատվիրակմամբ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) ԷԿՈսերվ բնապահպանական ծրագրի աջակցությամբ և ՇԵՆ բարեգործական հասարակական կազմակերպության կողմից իրականացվել է «Անասնակերի արտադրություն և արտոնների բարելավում՝ որպես ՔՈՎԻԴ-19 հետևանքների մեղման միջոցառում» ծրագրի շրջանակներում:

ԿՈՆՏԱԿՏՆԵՐ

Առաջարկությունների հետ կապված հարցեր ունենալու դեպքում կարող եք կապվել՝ «ՇԵՆ» ԲՀԿ գյուղատնտեսական ծրագրերի համակարգող՝ Նվարդ Շահմուրադյանին

+374 93 218494
nvard@shen.am
info@shen.am

